ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.03.2015թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

ՍՑ-10/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.08.2014թ. թիվ 73-1/638169-14 գրությամբ Ա/Ձ Գոռ Հունանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը (այսուհետ նաև՝ ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 24.02.2015թ. եզրակացությունը պարզեց.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.08.2014թ. թիվ 73-1/638169-14 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել Ա/Ձ Գոռ Հունանյանին (այսուհետ նաև՝ Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու համար:

<u>2. Ա/Ձ Գոռ Հունանյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը, կարծիք

ստանալու նպատակով 01.09.2014թ. թիվ 09/032-1458 գրությամբ դիմել է Ա/Ձ Գոռ Հունանյանին, սակայն Ա/Ձ-ից պատասխան չի ստացվել:

Ա/Ձ Գոռ Հունանյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 18.12.2014թ. ժամը 14:30-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

3. ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.08.2014թ. թիվ 06/032-1451 և 21.10.2014թ. թիվ 06/032-1651 գրություններով դիմել է ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ խնդրելով Ա/Ձ-ին Ցուցակում ներառելու հարցի ուսումնասիրության նպատակով Կենտրոնին տրամադրել «ՄՄՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն 12.09.2014թ. և 27.10.2014թ. գրութուններով Կենտրոն է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը և հայտնել, որ «ՄՄՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով Պատվիրատուի և Ա/Ձ-ի միջև 18.03.2014թ. կնքված պայմանագրի շրջանակներում Ա/Ձ-ն սննդամթերքը մատակարարել է անկանոն կերպով, ինչի կապակցությամբ բազմաթիվ անգամ բանավոր զգուշացվել է, սակայն իրավիճակը չի շտկվել:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ կետով, և հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.4 կետը, 3.1.4.1 կետի «բ» ենթակետը, միակողմանի լուծել է Ա/Ձ-ի հետ կնքված պայմանագիրը:

ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 27.10.2014թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հետևանքով Ա/Ձ-ին հաշվարկված տույժ կամ տուգանք չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, չի ներկայացել 18.12.2014թ. ժամը 14:30-ին նշանակված հանձնաժողովի նիստին:

ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 27.01.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով Ա/Ձ-ից գանձման ենթակա գումարներ (վնասներ, տույժեր և տուժանքի գումարներ) առկա չեն:

4. ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 24.02.2015թ. եզրակացությունը և առաջարկել է ՀՀ ֆինանսների նախարարության 21.08.2014թ. թիվ 73-1/638169-14 գրությամբ Ա/Ձ Գոռ Հունանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ա/Ձ Գոռ Հունանյանին (ՀՎՀՀ 54644021) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ-ի կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

5. ՍՑ-ԳԲԽ-10/14 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.08.2014թ. թիվ 73-1/638169-14 գրությամբ Ա/Ձ Գոռ Հունանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի և Ա/Ձ Գոռ Հունանյանի միջև 18.03.2014թ. կնքվել է ՄՄՄ-ՇՀԱՊՁԲ-11/2 սննդամթերքի գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը:

2. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսվել է, որ 47 չափաբաժին ապրանքատեսակները (այսուհետ նաև՝ ապրանքներ), ըստ հավելվածով սահմանված քանակների, անհրաժեշտ է մատակարարել՝ 1-ին չափաբաժնով նախատեսված «Հաց բարձր տեսակի» ապրանքը՝ օրական, իսկ մյուս չափաբաժիններով նախատեսված ապրանքները՝ շաբաթական և ամսական:

3. 18.03.2014թ. թիվ 36 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Ա/Ձ-ն 47 չափաբաժին ապրանքներից մատակարարել է միայն 14 չափաբաժիններով նախատեսված ապրանքները (չի մատակարարվել 33 չափաբաժիններով նախատեսված ապրանքներ):

4. 01.04.2014թ. թիվ 60 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Ա/Ձ-ն 47 չափաբաժին ապրանքներից մատակարարել է միայն 23 չափաբաժիններով նախատեսված ապրանքները (չի մատակարարվել 24 չափաբաժիններով նախատեսված ապրանքներ):

5. 01.05.2014թ. թիվ 78 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Ա/Ձ-ն 47 չափաբաժին ապրանքներից մատակարարել է միայն 20 չափաբաժիններով նախատեսված ապրանքները (չի մատակարարվել 24 չափաբաժիններով նախատեսված ապրանքներ):

6. Պատվիրատուն, նկատի ունենալով, որ Ա/Ձ-ի կողմից պարբերաբար խախտվում են Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ կետով և Պայմանագրի 3.1.4 կետի և 3.1.4.1 կետի «բ» ենթակետով, 04.06.2014թ. թիվ 3 որոշմամբ միակողմանի լուծել է Պայմանագիրը՝ Ա/Ձ-ի կողմից Պայմանագիրն էականորեն խախտելու հիմքով:

7. Ա/Ձ-ն Պատվիրատուի 04.06.2014թ. Պայմանագիրը լուծելու վերաբերյալ N 3 որոշումը ստացել է 17.06.2014թ.:

ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը 27.01.2015թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ վերոնշյալ պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտման հետևանքով Ա/Ձ-ից գանձման ենթակա գումարներ (վնասներ, տույժեր և տուժանքի գումարներ) առկա չեն:

6. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով ՍՑ-ԳԲԽ-10/14 բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 149-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով պատճառված

վնասի, հաշվարկված տույժի կամ տուժանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է:

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Ա/Ձ-ն պարտավորվել է նույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին կամ նրա կողմից որոշված ստացողին հանձնել նույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա դիմաց:

Պայմանագրի 2.2 կետով սահմանվել է, որ ապրանքը մատակարարվում է գնման ժամանակացույցին համապատասխան:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ ՀՀ «Արագածոտն մարզի Մաստարայի մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ն իրավունք ունի միակողմանի լուծել նույն պայմանագիրը, եթե Ա/Ձ-ն էականորեն խախտել է Պայմանագիրը: Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) խախտվել է ապրանքի մատակարարման ժամկետը:

Այսպիսով, Ա/Ձ-ն ավելի քան մեկ անգամ խախտել է Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, որպիսի պայմաններում գտնում ենք, որ առկա են հիմքեր Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 21.08.2014թ. թիվ 73-1/638169-14 գրությամբ Ա/Ձ Գոռ Հունանյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ Ա/Ձ Գոռ Հունանյանին (ՀՎՀՀ 54644021) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ա/Ձ Գոռ Հունանյանին կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 6 ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ազգանուշ Ֆրանգյան**

Անդամ՝ **Արթուր Բաղդասարյան**